

ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՅՐԻ ԿԵՆՊԱՆԻՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՕԴԱՆԱՎԵՐԻ ՀԵՏ  
ԴՐԱՆՑ ԲԱԽՄԱՆ ՎՏԱՆԳԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Թռչունների և վայրի կենդանիների դեմ պայքարի և օդանավերի հետ նրանց բախման վտանգի նվազեցման ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց) մշակված է Չիկագոյի Կոնվենցիայի N14 Հավելվածի, ԻԿԱՕ-ի N9137 ձեռնարկի (Doc.9137) մաս 3-ի, ԻԿԱՕ-ի N9332 ձեռնարկի (Doc.9332) և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) պետի 2007 թվականի ապրիլի 23-ի N64-Ն հրամանով հաստատված «ՀՀ սերտիֆիկացված աերոդրոմների շահագործման պայմաններով» (այսուհետ՝ Շահագործման պայմաններ) սահմանված պահանջների համաձայն և սահմանում է աերոդրոմ շահագործողի կողմից օդանավակայանում և հարակից տարածքներում թռչունների և վայրի կենդանիների հետ բախման վտանգի նվազեցմանն ուղղված աշխատանքների կազմակերպման գործընթացը:

1) Սույն ուղեցույցի իմաստով Աերոդրոմ շահագործող է համարվում օդանավակայանի սեփականատերը կամ այն իրավաբանական անձը, որն իրականացնում է օդանավակայանի շահագործումը կամ կոնցեսիոն կառավարումը:

2) Սույն Ուղեցույցի իմաստով հարակից տարածք է համարվում օդանավակայանի պարիսպին հարող և տեսադաշտի սահմաններում գտվող գոտին:

2. Օդանավերի հետ թռչունների և վայրի կենդանիների հետ բախման վտանգի նվազեցման գործընթացն ուղղված թռչչների անվտանգության ապահովմանը, ինչի շրջանակներում Աերոդրոմ շահագործողը՝

1) Մշակում է քաղաքականություն և ներքին կանոնակարգեր՝ ուղղված օդանավակայանի տարածքում թռչունների կուտակումների և վայրի կենդանիների դեմ պայքարի:

ա. Տարվա ընթացքում կատարված ուսումնասիրությունների հիման վրա մշակվում են տարեկան և միջնաժամկետ ռազմավարական գործողությունների ծրագրեր:

2) Հաշվառում, վերլուծում և գնահատում է օդանավակայանի տարածքում օդանավերի հետ տեղի ունեցած թռչունների և վայրի կենդանիների բախումները:

3) Ուսումնասիրում է օդանավակայանում և հարակից տարածքներում թռչունների կուտակումներին, ինչպես նաև օդանավակայանի տարածք վայրի կենդանիների ներխուժմանը նպաստող պայմանները և ձեռնարկում է միջոցառումներ՝ ուղղված դրանց վերացմանը: Ներկայացնում է առաջարկություններ օդանավակայանի հարակից տարածքների հողօգտագործման վերաբերյալ:

4) Մշակում է օդանավակայանի օրնիտոլոգիական իրավիճակի քարտեզ/հատակագիծ, որի վրա նշվում են թռչունների կուտակումների վայրերը, տեսակները, տեղաշարժման ուղիները, միգրացիայի ժամանակաշրջանները և սխեմաները:

ա. Թոշունների բների առկայության դեպքում քարտեզ/հատակագծի վրա նշվում են բնի տարածքը (չափսը), բնադրման տեղակայվածությունը, կերակրման վայրը, բնադրման փուլը:

5) Համագործակցում է պետական կառավարման համապատասխան մարմինների և օդանավակայանում գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ թոշունների և վայրի կենդանիների բնադրման և տեղաշարժման վերաբերյալ տեղեկատվության ստացման և հավաքագրման նպատակով:

6) Օդանավակայանի տարածքում նոր շենք-շինությունների կառուցման դեպքում իրականացվում է նախագծերի ուսումնասիրություն՝ ուղղված թոշունների և վայրի կենդանիների կողմից սպառնացող վտանգի նվազեցմանը:

7) Ապահովում է օդանավակայանում օդանավերի հետ թոշունների բախումների հաշվառումը և դրանց վերաբերյալ Գլխավոր վարչություն տեղեկատվության տրամադրումը Գլխավոր վարչության պետի 2007 թվականի հուլիսի 10-ի N117-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության օդանավակայանների ատերողրոմների շրջակայքում թոշունների բախումն օդանավերի հետ հաշվառելու և Քաղաքացիական Ավիացիայի Միջազգային Կազմակերպություն ներկայացնելու կարգը» (այսուհետ՝ Կարգ) համաձայն:

3. Ուղեցույցի 2-րդ կետով սահմանված գործընթացը կարող է իրականացվել Աերողրոմ շահագործողի կողմից ստեղծված համապատասխան ծառայության կողմից կամ կապալառու կազմակերպության (այսուհետ՝ Օրնիտոլոգիական խումբ) միջոցով:

1) Սույն կետում նշված գործընթացի նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով Աերողրոմ շահագործողի կողմից նշանակվում է պատասխանատու աշխատակից, որը հաշվետու է Աերողրոմ շահագործողի թոփքային անվտանգության ծառայությանը:

2) Կապալառու կազմակերպության հետ կնքվող պայմանագիրը մշակվում է համաձայն ԻԿԱՕ-ի N9137 ձեռնարկի (Doc.9137) մաս 3-ի:

4. Թոշունների և վայրի կենդանիների դեմ պայքարի շրջանակներում Օրնիտոլոգիական խմբի կողմից իրականացվում են հետևյալ կանխարգելիչ գործառույթները՝

1) Ամենօրյա օրնիտոլոգիական իրավիճակի գնահատում և վերահսկողության իրականացում հետևյալ ժամանակացույցի համաձայն՝ ժամը 7.00, 13.00, 18.00 և 20.00-ին:

2) Իրականացվում է օդանավակայանի և դրան հարակից տարածքներում թոշունների կուտակումներին նպաստող պայմանների, ինչպես նաև օդանավակայանի պարագծային պարիսպի ամբողջականության պարբերական ուսումնասիրություններ:

ա. Եթե սույն ենթակետում նշված ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվում են թոշունների կուտակումներին նպաստող պայմաններ կամ օդանավակայանի տարածք վայրի կենդանիների ներխուժելու առավել նպաստավոր հատվածներ, ապա դրանց մասին տեղեկատվությունը ներկայացվում է Աերողրոմ շահագործողին:

բ. Սույն ենթակետի «ա» պարբերության համաձայն ներկայացված տեղեկատվության հիման վրա Աերողրոմ շահագործողը ձեռնարկում է միջոցներ՝ ուղղված արձանագրված իրավիճակի շտկմանը:

գ. Մշակում է օդանավակայանում և հարակից տարածքներում թոշուններին գրավող բոլոր գործոնների ցանկը:

3) Մեզոնային առանձնահատկությունների բացահայտման նպատակով տարվա տարբեր եղանակներին դիտարկումների իրականացում:

4) Թոշունների կուտակումների առավել հաճախակի արձանագրված վայրերի և վայրի կենդանիների կողմից պարագծային պարիսպի վնասված հատվածների նկատմամբ իրականացվում է լրացուցիչ վերահսկողություն:

- 5) Թոշունների թվաքանակների և տեսակների հաշվառում, կուտակումների վայրերի և վարքի բնույթի (քունը, կերակրվելը, և այլն) արձանագրում:
- 6) Իրականացվում է վագքուդու պարբերական ստուգումներ. թոշունների հետ բախման փաստերի բացահայտման նպատակով:
- ա. Ստուգումների պարբերականությունը պայմանավորվում է օդանավակայանում առկա օրնիտոլոգիական իրավիճակով և թռիչք/վայրէջքների քանակով:
- 7) Իրականացվում է օդանավերի հետ թոշունների բախման դեպքերի ուսումնասիրություն, վերլուծություն և ռիսկայնության աստիճանի գնահատում:
- 8) Աերոդրոմի գրունտային գոտիների սպասարկման գործընթացի շրջանակներում
- ա. Ընտրվում և ներկայացվում է այն մշակաբույսերի ցանկը, որոնք կբացառեն թոշունների կամ կենդանիների կուտակումները:
- բ. Սահմանվում է վերահսկողություն գրունտային գոտիների բուսական շերտի բարձրության նկատմամբ:
5. Օրնիտոլոգիական խումբը ձեռնարկում և ապահովում է օդանավերի հետ թոշունների և վայրի կենդանիների բախումը կանխելու բոլոր միջոցները: Թոշունների կուտակումների և վայրի կենդանիների դեմ պայքարի շրջանակներում կարող են կիրառվել ստորև ներկայացվող հիմնական մեթոդներից մեկը կամ մի քանիսը միաժամանակ՝
- 1) Ձայնային մեթոդ, որի ժամանակ օգտագործվում են գազային թնդանոթներ, հրատեխնիկա, տագնապի ձայներ, վտանգի աղաղակներ, գիշատիչների ճղճոցներ:
  - 2) Տեսողական միջոցների կիրառման մեթոդ՝ դրոշակների, ժապավենների, լույսերի, ճուռակի տեսքով օդապարուկների, գիշատիչների, որորների և այլ խրտվիլակների օգտագործմամբ:
  - 3) Քիմիական մեթոդ, որի ժամանակ օգտագործվում են վնասակար ազդեցություն ունեցող միջոցներ, մասնավորապես՝ վախեցնող հոտ, մածուցիկ (կաչուն) և կերին խառնվող սթրես առաջացնող նյութեր:
- ա. Քամիական մեթոդի կիրառման դեպքում կարող են օգտագործվել միայն ՀՀ-ում թույլատրվող թունավոր նյութեր:
- 4) Ֆիզիկական արգելքների ստեղծման մեթոդ՝ վայրի կենդանիների մուտքն օդանավակայանի տարածք սահմանափակող, ինչպես նաև բնադրման կամ պատասպարման համար ցանցերի կամ թակարդների տեղադրման միջոցով:
  - 5) Վարժեցված որսկան գիշատիչ թոշունների օգտագործման մեթոդ:
  - 6) Համապատասխան մեթոդի կամ մեթոդների տեսակի կիրառման որոշումն ընդունվում է կատարված ուսումնասիրությունների և հետազոտությունների հիման վրա:
6. Ուղեցույցի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված գործառույթների ընթացքում Օրնիտոլոգիական խմբի կողմից ապահովվում են աերոդրոմի տարածքում անվտանգության կանոնակարգերը. համաձայն Գլխավոր վարչության պետի 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 246-Ն հրամանով հաստատված «Քաղաքացիական ավիացիայի բնագավառում շահագործվող վերգետնյա միջոցների ու մատուցվող ծառայությունների ապահովության ու անվտանգության կանոնակարգի» (այսուհետ՝ Կանոնակարգ):
- 1) Օրնիտոլոգիական խմբի տրանսպորտային միջոցը պետք է համալրված լինի Կանոնակարգի 38-րդ կետով սահմանված միջոցներով՝ դեղին առկայծիչ լույսերով, հրդեհի մարման և քարշակման միջոցներով, ներօդանավակայանային ռադիոկապով:
  - 2) Օրնիտոլոգիական խմբի տրանսպորտային միջոցը շահագործող անձնակազմը պետք է ունենա Աերոդրոմ շահագործողի կողմից տրված վկայական. համաձայն Կանոնակարգի 50-րդ կամ 53-րդ կետերի:

7. Եթե օդանավերի հետ թռչունների և վայրի կենդանիների հետ բախման վտանգի նվազեցման գործընթացն իրականացվում է Աերոդրոմ շահագործողի համապատասխան ծառայության կողմից, ապա այն պետք է ապահովված լինի տրանսպորտային միջոցով և Ուղեցույցի 5-րդ կետում թվարկած մեթոդների կիրառման համար անհրաժեշտ միջոցներով, սարքվորումներով և նյութերով:

1) Եթե սույն կետում իրականացվում է կապալարու կազմակերպության կողմից, ապա տրանսպորտային միջոցի և Ուղեցույցի 5-րդ կետում թվարկած մեթոդների կիրառման համար անհրաժեշտ միջոցների, սարքվորումների և նյութերի ապահովման դրույթները սահմանվում են պայմանագրոյաին հիմունքներով:

8. Իր գործառույթների իրականացման շրջանակներում Օրնիտոլոգիական խումբը համագործակցում է Աերոդրոմ շահագործողի թռիչքային անվտանգության ծառայության և օդային երթևեկության սպասարկման (այսուհետ՝ ՕԵՍ) աերոդրոմային կարգավարական կետի հետ, որոնց ներկայացնում է՝

1) Տեղեկատվություն օդանավակայանի օրնիտոլոգիական իրավիճակի մասին՝ թռչունների կուտակումների կամ տեղաշարժի, վայրի կենդանիների կողմից սպառնացող վտանգի վերաբերյալ:

ա. Ելնելով օդանավակայանում առաջացած օրնիտոլոգիական իրավիճակից Օրնիտոլոգիական խումբը կարող է առաջարկություններ ներկայացնել թռիչքների ժամանակավոր դադարեցման համար:

2) Աշխատանքների անցկացման վայրը, ժամանակը և կիրառվող մեթոդը:

ա. Սույն ենթակետում նշված տեղեկատվությունն արձանագրվում է խմբի կողմից վարվող գրանցամատյանում:

9. Օդանավակայանում օդանավերի հետ թռչունների կամ վայրի կենդանիների բախման դեպքում՝

1) Աերոդրոմ շահագործողի և օդանավ շահագործողի ներկայացուցչի կողմից կազմվում է համատեղ արձանագրություն՝ Կարգով սահմանված ձևի համաձայն:

2) Օրնիտոլոգիական խմբի կողմից ուսումնասիրվում է բախման հնարավոր վայրը, որոնվում են թռչի կամ կենդանու մնացորդները և դրանց հայտնաբերման դեպքում որոշվում է թռչի կամ կենդանու տեսակը: Անհրաժեշտության դեպքում մնացորդները կարող են ներկայացվել մասնագիտական կազմակերպություններին՝ առավել մանրամասն զննում կատարելու նպատակով:

3) Իրականացվում է բախման պատճառների վերլուծություն, դրանք գնահատելու և կանխիչ միջոցներ ձեռնարկելու համար:

10. Օդանավերի հետ թռչունների և վայրի կենդանիների հետ բախման վտանգի նվազեցմանն ուղղված գործընթացի պատշաճ կատարումն ապահովելու նպատակով՝

1) Օրնիտոլոգիական խմբի կազմում ընդգրկված անձնակազմը պետք է ունենա անհրաժեշտ սկզբնական պատրաստվածություն և ապահովվի նրանց վերապատրաստման գործընթացը:

2) Աերոդրոմ շահագործողի կողմից մշակվում և հաստատվում է Օրնիտոլոգիական խմբի գործառույթները սահմանող կանոնակարգը:

3) Օրնիտոլոգիական խումբն իրեն վերապահված գործառույթներն իրականացլիս պետք է տեղեկացված և ապահովված լինի ոլորտը կանոնակարգող փաստաթղթերով: